նութեան և մատենագրութեան[1]) լուսաւորութիւնն մտնում է և Աղուանից երկիրն Ս. Մեսրոպի ձեռով, որ միևնոյն ժամանակ լինում է քարոզիչ առաքեալ և երկրորդ Լուսաւորիչ, ինչպէս տեսանք կանխաւ։ Բայց հազար ափսոս, որ Աղուանից մատենագրութիւնն այրւում է Զ. դարում Խազրաց ձեռով (Մով Կաղ. եր. 10 և 91)։

Աղուանից եկեղեցին Դ. դարից սկսեալ մինչև ԺԹ. դարի առաջին քառորդն ունեցած է իւր առանձին կաթուղիկոսութիւնը, եպիսկոպոսութիւնը և հոգեւոր իշխանութիւնը։

Սակայն Հայոց և Աղուանից միացեալ եկեղեցու սերտ կապը անքակտելի պահպանելու հեռատեսութեամբ, ընտրեալ կաթուղիկոսացուներն օծումը միշտ ընդունած են Հայոց ընդհանուր հայրապետներից, բացի մի քանի ճրռ և ինքնակոչ կաթուղիկոսներից, որպէս ապացուցանում են պատմութիւններն։ Դեռ Զ դարում Աղուանից կաթուղիկոսներին ուղղեալ նամակների երեսներին գրում էին. «Աղուանից, Լփանց և Հողայ Կաթուղիկոսին» (Մով. Կաղ. եր. 275)։

Բայց հարկ է յայտնել որ ոչ մի երկիր և ոչ մի ժողովուրդ ենթարկուած չէ այնքան կրօնական և հաւատափոխութեան հալածանաց, որքան Աղուանից ժողովուրդն։ Հետզհետէ յաջորդում են միմեանց Պարսից կրակապաշտական և Արաբացւոց մահմէտական դարձնելու բռնաբարութիւններն, նահատակութիւններն, մարտիրոսութիւններն և անբացատրելի հալածանք-

[1]) Մինչև Դաղստանից մինչև Ճառն ամենուրեք խուզարկեցինք եկեղեցիների, գրչագրերի, հանգստարանների և բերդերի արձանագրութիւնները և յիշատակարանները, որպէս զի գտնէինք Աղուանից գրերի հետքը։ Միայն զտանք մի քանի տառեր, որք փորագրուած են Դարբանդի հիւսիսային պարսպի արտաքին կողմում — Պ Անդրէաս Զաքարեանի պարտիզում։ Տառերս սերտ մերձաւորութիւն ունին Մեսրովբեան գլխագիր տառերին։